ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան *31 հունվարի 2007 թվական*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ- ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

2006թ. հունվար-դեկտեմբերի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	2006թ. հունվար-դեկտեմ-բեր	2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2006թ. դեկտեմ-բերը նոյեմբերի նկատ-մամբ, %
Համախառն ներքին արդյունքը, *մլն. դրամ*			
շուկայական գներով	2665036.6	113.4	142.2[1]
հիմնական գներով [2]	2447072.8	113.6	x
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ), *%*	x	104.8	x
Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը, *մլն. դրամ*	643503.7	99.1	108.0
Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման, *մլն. դրամ*	531312.2	99.3	x
Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն առանց ադամանդի արտադրության, մլն. դրամ	640696.7	102.3	x
Սպառողական ապրանքների արտադրության ծավալը, *մլն դրամ*	230852.6	102.1	x
Էլեկտրաէներգիայի արտադրությունը, *մլն. կՎտ. ժամ*	5940.8	94.1	137.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, *մլն. դրամ*	555922.3	100.4	109.7
Շինարարություն			
շինարարության ծավալը, *մլն. դրամ*	623111.5	137.1	131.4
շահագործման հանձնված բնակելի տները, *քառ.մ ընդհանուր մակերեսով*	365721	106.6	78.9
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառություն, *մլն. տոննա-կմ*	2345.5	101.9	120.5
Արտաքին առևտրաշրջանառությունը			
մլն. ԱՄՆ դոլար	3198.3	115.2	112.4
մլրդ. դրամ	1314.4	x	x
արտաքին առևտրաշրջանառությունն առանց ադամանդի, մլն. դոլար	2729.4	121.7	x
այդ թվում՝			

[1] *Ընթացիկ գներով:*
[2] *Հիմնական գներով ՀՆԱ-ն, ի տարբերություն շուկայական գներով ՀՆԱ-ի, իր մեջ չի ներառում հարկերն ապրանքների (արտադրանքի) վրա, բայց ներառում է սուբսիդիաներն ապրանքների (արտադրանքի) վրա:*

	2006թ. հունվար-դեկտեմ-բեր	2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2006թ. դեկտեմ-բերը նոյեմբերի նկատ-մամբ, %
արտահանում			
մլն. ԱՄՆ դոլար	1004.0	103.1	129.8
մլրդ. դրամ	412.2	x	x
արտահանումն առանց ադամանդի, մլն. դոլար	758.4	106.7	x
ներմուծում			
մլն. ԱՄՆ դոլար	2194.3	121.8	106.0
մլրդ. դրամ	902.2	x	x
ներմուծումն առանց ադամանդի, մլն. դոլար	1971.0	128.7	x
Միջին ամսական անվանական աշխատավարձը (գնահատական) [1], *դրամ*	64001	123.5	119.6
Բնակչության դրամական եկամուտները[2], *մլն. դրամ*	1722253.7	119.8	162.4
Բնակչության իրական տնօրինվող եկամուտները[2], *մլն. դրամ*	1589434.2	116.7	161.3
Բնակչության դրամական ծախսերը[2], *մլն. դրամ*	1650686.8	118.9	144.7
Մանրածախ առևտրի շրջանառությունը, *մլն. դրամ*	820816.7	110.5	179.7
Ծառայությունների ծավալը, *մլն. դրամ*	478858.0	120.3	110.7
Սպառողական գների ինդեքսը, *%*	x	102.9	101.6
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը, *%*	x	96.8	100.0

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ազգային հաշիվներ

Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

2006թ. հունվար-դեկտեմբերի ՀՆԱ-ի ցուցանիշը: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 2665036.6 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 113.4%՝ 2005թ. հունվար- դեկտեմբերի 114.0% համապատասխան ցուցանիշի դիմաց:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 827394 դրամ (1989 ԱՄՆ դոլար կամ 1587 եվրո):

[1] *Միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշը սկսած ս.թ. մարտ ամսից հավաքագրվել և ամփոփվել է համաձայն Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:*
[2] *Ցուցանիշի հաշվարկը կատարվում է դրամարկղային եղանակով:*

Արտադրություն (ծառայություններ)

Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ 2335 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 643503.7 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 656638.0 մլն. դրամի արտադրանք, որից՝ ԱՊՀ երկրներում՝ 57728.0 մլն. դրամի, այլ երկրներում՝ 173242.8 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.1%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 99.3%:

2006թ. հունվար–դեկտեմբերին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 5 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև, ըստ մարզերի և արտադրությունների.

- Երևան քաղաքում՝ 2.5%, հիմնականում ի հաշիվ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (119.7%), մեքենաների և սարքավորանքի (118.7%), ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության (117.2%), հրատարակչական և տպագրական գործունեության (114.7%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (114.0%), մետաղագործական արդյունաբերության (111.9%), ծխախոտային արտադրատեսակների (105.7%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (103.7%),

-ՀՀ Տավուշի մարզում՝ 8.8%, հիմնականում ի հաշիվ էլեկտրաէներգիայի արտադրության (194.0%), հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (178.2%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (104.6%),

-ՀՀ Սյունիքի մարզում՝ 7.6%, հիմնականում ի հաշիվ մետաղե հանքաքարերի արդյունահանման (108.6%), մեքենաների և սարքավորանքի (144.8%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (124.6%),

-ՀՀ Արարատի մարզում՝ 7.2%, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (2.6 անգամ), թղթազանգվածի, թղթի, ստվարաթղթի և դրանից արտադրատեսակների (149.4%), բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրության (126.9%), մետաղագործական արդյունաբերության (126.3%), սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (113.3%), քիմիական արդյունաբերության (108.2%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (105.6%),

-ՀՀ Շիրակի մարզում՝ 4.1%, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (167.6%), մանածագործական (133.4%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (127.2%) և մեքենաների և սարքավորանքի արտադրության (117.7%):

Հարկ է նշել, որ հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 44.5%-ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 46.0 և 42.6%: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիտորինգում 88.6% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 13.8%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 7.7% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 83.3%-ը:

2006թ. հունվար-դեկտեմբերին արտադրված (հաշվառվող) 124 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 72-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի՝ 71-ից 41-ի և սպառողական ապրանքների՝ 53 -ից 31 -ի գծով:

2006թ. հունվար-դեկտեմբերին ***քիմիական*** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ ավելացել է 34.7%-ով, պլաստմասսայե արտադրատեսակներինը՝ 19.1%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 11.0%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և կաուստիկ սոդայի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 29.8 և 32.8%-ով:

Մետաղագործական արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-դեկտեմբերին 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատությամբ մոլիբդենի խտանյութի արտադրությունն ավելացել է 34.9%-ով, պղնձի խտանյութում պղնձինը՝ 10.7%-ով, իսկ ֆեռոմոլիբդենի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 12.6 և 11.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 5940.8 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի 94.1%-ը: Ընդ որում, ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 2.8%-ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար, 19.3 և 2.8%-ով:

2006թ. հունվար-դեկտեմբերին ՀԱԷԿ-ը թողարկել է 2640.3 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 44.4%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 1475.2 մլն. կՎտ ժամ և

24.8%-ը, ՀԷԿ-երը՝ 1822.7 մլն. կՎտ ժամ և 30.7%-ը, հողմային էլեկտրականը՝ 2.6 մլն. կՎտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 381.4 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի նույն ցուցանիշի 79.1%-ը:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ.հունվար-դեկտեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 555.9 մլրդ.դրամ, որը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 0.4%-ով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի, ունի հետևյալ պատկերը. անասնաբուծությունում այն կազմել է 199683.1 մլն. դրամ և 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 10.4 %-ով, իսկ բուսաբուծությունում՝ 356239.2 մլն. դրամ և զիջել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 4.4%-ով:

Բուսաբուծության համախառն արտադրանքի նվազումը հիմնականում պայմանավորված է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի (46.4 %), պտղի և հատապտղի (9.3 %), կարտոֆիլի (4.4%) և կերային մշակաբույսերի (կուտակված խոտ) (20.8%) համախառն բերքի ծավալների անկմամբ: Միաժամանակ, ավելացել են բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի, ինչպես նաև խաղողի արտադրության ծավալները՝ համապատասխանաբար, խաղողինը՝ 37.0 հազ. տոննայով կամ 22.5 %-ով, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 116.1 հազ. տոննայով կամ 17.5%-ով, բոստանային մշակաբույսերինը՝ 17.1 հազ. տոննայով կամ 4.5%-ով:

Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2006թ. հունվար-դեկտմբերին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 2467.9 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 831.2 մլն. դրամով կամ 50.8%-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության ծավալները հանրապետությունում[1]

	Տոննա		*Հազ. դրամ*		2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ,%
	հունվար-դեկտեմբեր		հունվար-դեկտեմբեր		
	2006թ.	2005թ.	2006թ.	2005թ.	
Կատարվել է որս ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում, ընդամենը	1406.2	932.6	2467881.0	1636713.0	150.8
որից `իրացվել է	1406.2	932.6	2467881.0	1636713.0	150.8

Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում պետական բյուջեի, մարդասիրական օգնության, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 365721 քառ.մ ընդհանուր մակերեսով 788 նոր բնակելի շենք կամ 2005թ. հունվար-դեկտեմբերին գործարկված մակերեսի 106.6%-ը: Մասնավորապես.

♦ ***պետական բյուջեի*** հաշվին՝ 9430 քառ.մ ընդհանուր մակերեսով 113 բնակելի շենք, որոնցից, համապատասխանաբար, Ախուրյանի տարածաշրջանում՝ 2145 և 3, Ամասիայի՝ 65 և 1, Գուգարքի՝ 420 և 7, Սպիտակի՝ 6740 և 101, Ստեփանավանի՝ 60, քառ.մ և 1 բնակելի շենք,

♦ ***մարդասիրական օգնության միջոցների*** հաշվին՝ 2677 քառ.մ ընդհանուր մակերեսով 6 բնակելի շենք, որոնցից, համապատասխանաբար, Գորիսի տարածաշրջանում՝ 2415 և 1, Գուգարքի՝ 57 և 1, Սպիտակի՝ 76 և 1, Ստեփանավանի՝ 92 և 2 և ք. Երևանում՝ 37 քառ.մ ընդհանուր մակերեսով 1 բնակելի շենք,

♦ ***կազմակերպությունների միջոցների*** հաշվին՝ ք.Երևանում 51115 քառ.մ ընդհանուր մակերեսով 12 բնակելի շենք,

♦ ***բնակչության միջոցների*** հաշվին՝ 302499 քառ.մ ընդհանուր մակերեսով 657բնակելի շենք, որոնցից համապատասխանաբար, Աշտարակի տարածաշրջանում՝ 6150 և 28, Արարատի՝ 5100 և 11, Արտաշատի՝ 552 և 4, Մասիսի՝ 3430 և 22, Արմավիրի՝ 3040 և 16, Վաղարշապատի՝ 7230 և 35, Մարտունու՝ 4300 և 40, Սևանի՝ 1610 և 8, Գուգարքի՝ 220 և 1, Ստեփանավանի՝ 960 և 8, Կոտայքի՝ 3321 և 17, Հրազդանի՝ 1120 և 11, Նաիրիի՝ 830 և 4, Արթիկի՝ 857 և 3, Կապանի՝ 820 և 7, Եղեգնաձորի՝ 935 և 10, Իջևանի՝ 1099 և 16, Նոյեմբերյանի՝ 310 և 3, Տավուշի `280 և 1, ք.Դիլիջանում՝ 798 և 3, ք.Վանաձորում՝ 6402 և 27, ք. Գյումրիում՝ 5801 և 31 և ք.Երևանում՝ 247334 քառ.մ և 351 բնակելի շենք:

2006թ. դեկտեմբերին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի 76.8%-ն իրականացվել է բնակչության միջոցների հաշվին (2005թ.՝ 39.7%):

[1] *Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատման:*

Հանրակրթական դպրոցների շինարարություն: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում շահագործման է հանձնվել 700 աշակերտական տեղով 4 նոր հանրակրթական դպրոց: Մասնավորապես.

♦ ***պետական բյուջեի*** հաշվին Արտաշատի տարածաշրջանում շահագործման է հանձնվել 200 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց,

♦ ***Համաշխարհային բանկի վարկի*** հաշվին՝ 500 աշակերտական տեղով 3 հանրակրթական դպրոց, որոնցից, համապատասխանաբար, Ճամբարակի տարածաշրջանում՝ 200 և 1, Տաշիրի՝ 50 և 1 և Տավուշի տարածաշրջանում՝ 250 աշակերտական տեղով 1 հանրակրթական դպրոց:

Իրականացված շինարարության ծավալը: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել է 623111.5 մլն.դրամի շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 255141.9 մլն. դրամի: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 571582.4 մլն.դրամ, որոնցից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 209368.8 մլն. դրամ:

Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում վերանորոգվել է 102 հանրակրթական դպրոց: Մասնավորապես.

♦ ***պետական բյուջեի*** հաշվին՝ 92 հանրակրթական դպրոց, այդ թվում ՀՀ Արագածոտնի մարզում՝ 2, ՀՀ Արարատի մարզում՝ 21, ՀՀ Արմավիրի մարզում՝ 11, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 9, ՀՀ Լոռու մարզում՝ 4, ՀՀ Կոտայքի մարզում՝ 6, ՀՀ Շիրակի մարզում՝ 3, ՀՀ Սյունիքի մարզում՝ 8, ՀՀ Տավուշի մարզում՝ 11 և ք.Երևանում՝ 17 հանրակրթական դպրոց,

♦ ***Համաշխարհային բանկի վարկի*** հաշվին՝ 10 հանրակրթական դպրոց, այդ թվում ՀՀ Շիրակի մարզում՝ 3, ՀՀ Արմավիրի մարզում՝ 2, ՀՀ Կոտայքի մարզում՝ 1 և ք.Երևանում՝ 4 հանրակրթական դպրոց:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրով լիովին հիմնանորոգվել են 111.66 կմ ընդհանուր երկարությամբ 25 ճանապարհահատվածներ, այդ թվում՝ 54.57 կմ միջպետական, 31.5 կմ հանրապետական և 25.59 կմ մարզային ու համայնքային ճանապարհահատվածներ:

Հիմնանորոգվել են 22 կամուրջներ, որոնցից 3-ը՝ միջպետական, 3-ը՝ հանրապետական և 16-ը՝ տեղական նշանակության ճանապարհներ:

Հիմնական միջոցների գործարկում: 2006թ. հունվար-դեկտեմբերին գործարկվել են 455173.1 մլն. դրամի հիմնական միջոցներ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով 149126.6 մլն. դրամ:

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2006թ. հունվար-դեկտեմբերին ***երկրաշարժից տուժած*** քաղաքներում և գյուղերում պետական բյուջեի, մարդասիրական օգնության և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 26382 քառ.մ ընդհանուր մակերեսով 210 նոր բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 7.2%-ը :

2006թ. դեկտեմբերին հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի 20.9%-ն իրականացվել է բնակչության միջոցների հաշվին (2005թ.՝ 7.3%):

Հանրակրթական դպրոցների շինարարություն: *Համաշխարհային բանկի* վարկի շահագործման է հանձնվել 300 աշակերտական տեղով 2 նոր հանրակրթական դպրոց, որոնցից, համապատասխանաբար, Տաշիրի տարածաշրջանում՝ 50 և մեկ և Տավուշի տարածաշրջանում՝ 250 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

Իրականացված շինարարության ծավալը: Հանրապետության աղետի գոտում 2006թ. հունվար-դեկտեմբերին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 35439.4 մլն.դրամի շինարարություն կամ հանրապետությունում շինարարության ընդհանուր ծավալի 5.7%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 28004.5 մլն. դրամի (11%):

Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 16.6%-ով:

Բեռնափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների

	2006թ. հունվար-դեկտեմբեր	2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2006թ. դեկտեմբեր	2006թ. դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ,%
Տրանսպորտ, *ընդամենը, հազ.տոննա*	**9659.0**	**116.6**	**898.5**	**99.0**
այդ թվում՝				
երկաթուղային	**2719.6**	**104.1**	**276.1**	**104.3**
այդ թվում՝				
արտահանվել են	513.2	120.6	51.3	108.2
ներկրվել են	1274.4	115.1	119.1	100.6
ներհանրապետական	932.0	86.4	105.7	106.8
ավտոմոբիլային	**5730.4**	**127.9**	**461.7**	**89.6**
այդ թվում՝				
արտահանվել են	248.1	93.6	17.5	103.6
ներկրվել են	596.3	109.0	65.5	109.5
ներհանրապետական	4886.0	133.2	378.7	86.3

	2006թ. հունվար-դեկտեմբեր	2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2006թ. դեկտեմբեր	2006թ. դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ,%
օդային[1]	**9.3**	**100.0**	**1.0**	**142.9**
այդ թվում՝				
արտահանվել են	4.1	110.8	0.3	150.0
ներկրվել են	5.2	94.5	0.7	140.0
մայրուղային խողովակաշարային	**1199.7**	**101.7**	**159.7**	**125.6**
այդ թվում՝				
ներկրվել են	1199.7	101.7	159.7	125.6

Վագոնների միջին օրական բեռնաթափումը 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 104 վագոն և 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել 1 միավորով, իսկ բեռնումը կազմել է 72 վագոն և նվազել 1 միավորով: Նույն ժամանակաշրջանում վագոնապտույտը կազմել է 5.3 օր և 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ արագացել 1.9 օրով:

Բեռնաշրջանառություն: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 1.9 %-ով:

Ուղևորափոխադրումներ: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 12.7%-ով:

Ուղևորաշրջանառություն: 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 2.2 %-ով:

ճանապարհատրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2006թ. հունվար-դեկտեմբերին ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) քանակը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 20.0 %-ով:

2007թ. հունվարի 1-ի դրությամբ 183 չբացահայտված ՃՏՊ-ի հետևանքով զոհվել է 38 և վիրավորվել՝ 158 մարդ:

Վարորդների անսթափ վիճակում գտնվելու պատճառով տեղի ունեցած 66 ՃՏՊ-ի հետևանքով զոհվել է 24 և վիրավորվել՝ 106 մարդ :

2006թ. հունվար-դեկտեմբերին գրանցված 1574 ՃՏՊ-ի 57.5%-ը կատարվել է քաղաքային և գյուղական բնակավայրերում (զոհվել է 126 և վիրավորվել՝ 1068 մարդ), 41.2%-ը՝ բնակավայրերից դուրս ավտոմոբիլային ճանապարհներին (զոհվել է 198 և վիրավորվել՝ 1002 մարդ), 1.3%-ը՝ այլ բնակավայրերում (զոհվել է 8 և վիրավորվել՝ 19 մարդ):

[1] *Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ավիաընկերությունների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:*

Կ ա պ

Հայաստանի Հանրապետությունում 2006թ. հունվար-դեկտեմբերին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած կապի ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալն ընթացիկ գներով կազմել է 126158.6[2] մլն.դրամ, որը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 36.9%-ով: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 82538.5 մլն. դրամ, որը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 52.4%-ով:

Հեռախոսային կապ: Կանչերով և պատվերներով միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների քանակի ցուցանիշները բնութագրվում են ստորև բերված աղյուսակով.

	2006թ. հունվար-դեկտեմբեր	**2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %**
Միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների քանակը, ***հազ. միավոր***	**63514.0**	**74.7**
այդ թվում՝ միջքաղաքային	55076.5	73.8
միջազգային	8437.5	81.2
այդ թվում՝ ԱՊՀ երկրներ	6732.6	78.6
այլ երկրներ	1704.9	93.0

Միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների կանչերի ընդհանուր քանակը կազմել է 184830.0 հազ. միավոր, որից ավարտվել են խոսակցությամբ 61429.9 հազ. միավոր կամ 33.2%:

Միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը

	2006թ. հունվար-դեկտեմբեր	2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ, %
Միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը, *հազ.հատ*	**2721.3**	**76.0**
այդ թվում՝ միջքաղաքային	2425.3	76.6
միջազգային	296.0	71.3
որից չեն կատարվել՝ միջքաղաքային	560.2	46.2
միջազգային	77.0	47.6

2006թ. հունվար-դեկտեմբերին միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերների ընդհանուր քանակի 10.9%-ը բաժին է ընկել միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներին (2005թ. հունվար-դեկտեմբերի 11.6%-ի դիմաց), իսկ մնացածը՝ միջքաղաքային: Միևնույն ժամանակ, միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներից չեն կատարվել 26.0%-ը (2005թ. հունվար-դեկտեմբերի

[2] *Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի:*

12.3%-ի դիմաց), իսկ միջքաղաքային պատվերներից՝ 23.1%-ը (2005թ. հունվար-դեկտեմբերի 7.1%-ի դիմաց):

Առևտուր և այլ ծառայություններ (սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկա (առևտրի շրջանառությունը և ծառայությունների ծավալը)

	2006թ. հունվար-դեկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը, *մլն. դրամ*	2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2005թ.	2006թ.
Առևտրի շրջանառությունը և ծառայությունների ծավալը, ընդամենը	**1558605.8**	**115.6**	**100.0**	**100.0**
այդ թվում՝				
առևտրի շրջանառությունը, ընդամենը	1079747.8	113.6	70.7	69.3
դրանից՝				
ավտոմեքենաների առևտուրը[1]	69497.6	135.7	3.7	4.5
մանրածախ առևտրի շրջանառությունը	820816.7	110.5	55.3	52.7
Ծառայությունների ծավալը	478858.0	120.3	29.3	30.7

2006թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 15.6% աճ՝ 2005թ. հունվար-դեկտեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով:

Մանրածախ առևտուր

2006թ. հունվար-դեկտեմբերին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 820816.7 մլն. դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.5%-ով: 2006թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառությունը, համադրելի գներով, կազմել է 179.7%:

2006թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 79.8% (655278.7 մլն.դրամ): Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

ՀՀ մարզերին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունները, հիմնականում, պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, առևտրի շրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

---

[1] *Սույն ցուցանիշը ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:*

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության 86.0%-ը (706078.4 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ ՀՀ մի շարք մարզերի (հիմնականում ք.Երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք.Երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: 2006թ. հունվար-դեկտեմբերին մանրածախ առևտրի շրջանառության 46.5%-ը (382237.1 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: Ըստ վիճակագրական հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում խանութների 43.6%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 44.3%-ը՝ ոչ պարենային և 12.1 %-ը՝ խառն ապրանքների վաճառքով:

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 86.6%: Հարկ է նշել, որ դրանց առևտրի շրջա-նառությունը կազմել է 23.1%, այն դեպքում, երբ խանութների ընդհանուր քանակում 1.1%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված առևտրի շրջանառությունը կազմել է 47.8%:

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալների և փորձագիտական գնահատականի հիման վրա, 2006թ. հունվար-դեկտեմբերին առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 273041.6 մլն. դրամ, որը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 101.0%:

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 66 սպառողական ապրանքների շուկաներից 48-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 24 շուկաներից՝ 18-ը, Շիրակի մարզում՝ 8 շուկաներից 7-ը, Գեղարքունիքի մարզում 8-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 7-ից 3-ը, Արագածոտնի, Արարատի և Սյունիքի մարզերում գործող սպառողական ապրանքների շուկաները մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված ՀՀ սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունում ոչ պարենային ապրանքների մեծ տեսակարար կշիռը (84.1%):

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը. գերփոքր՝ 2615, փոքր՝ 4245, միջին՝ 535 և խոշոր՝ 6990 մարդ:

2006թ. հունվար-դեկտեմբերին պահպանվել է 2005թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես՝ ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2006թ. հունվար-դեկտեմբերին 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ

շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 12.7 – 34.0 % միջակայքում:

2007թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 59334.2 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 44 օր:

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից բարձր է Վայոց ձորի (59 օր), Լոռու (49 օր), Կոտայքի (46 օր) մարզերում և ք. Երևանում (45 օր):

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն նաև գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2006թ. հունվար-դեկտեմբերին դրանցում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր մանրածախ առևտրի շրջանառության 2.8%-ը կամ 22577.7 մլն. դրամը[1]:

Ծառայություններ

2006թ. հունվար-դեկտեմբերին ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 478858.0 մլն.դրամ, որը 2005թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 20.3 %-ով:

2006թ. հունվար-դեկտեմբերին 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 4.0% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է հյուրանոցների և ռեստորանների (3.3%), կոմունալ (2.2%), սոցիալական (4.8%), կրթության (8.1%), կապի (12.2%), տրանսպորտի (1.6%) ծառայությունների սակագների հավելաճով:

2006թ. հունվար-դեկտեմբերին ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի (109783.5մլն.դրամ) և կապի (126158.6մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 22.9 և 26.3%:

Ծառայությունների կառուցվածքում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ֆինանսական գործունեության (31571.3մլն.դրամ), կրթության (29817.0մլն.դրամ), առողջապահության (29424.7մլն.դրամ), հյուրանոցների և ռեստորանների (20442.5 մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 6.6, 6.2, 6.1 և 4.3%:

2006թ. հունվար-դեկտեմբերին ծառայությունների ոլորտում առկա է ք.Երևանի գերակայությունը: Ըստ ծառայությունների տեսակների, մարզերի տեսակարար կշիռը տատանվել է 0.2-28.0%-ի սահմաններում:

2006թ. հունվար-դեկտեմբերին ծառայությունների ընդհանուր ծավալի 87.5%-ը (419045.0 մլն.դրամ) բաժին է ընկել ք. Երևանին և մնացած 12.5% (59813.0 մլն.դրամ) մյուս մարզերին:

2006թ. հունվար-դեկտեմբերին ծառայությունների ոլորտում, ի տարբերություն ՀՀ մյուս մարզերի, ք. Երևանի գերակայությունը պահպանվել է նաև միջին հաշվով մեկ բնակչին ընկնող

[1] *Ցուցանիշը չի ներառում գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառությունը:*

ծառայությունների ծավալի առումով: Այսպես, ք.Երևանի ծառայությունների շուկայի ծավալը 2006թ. հունվար-դեկտեմբերին 2.6 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 13.2-25.9%-ի միջակայքում:

2006թ. հունվար-դեկտեմբերին պահպանվել է ք.Երևանի սպառողական շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես, ք. Երևանի սպառողական շուկայի ծավալը 2006թ. հունվար-դեկտեմբերին 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 13.4-31.0%-ի միջակայքում:

Գներ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս[1)]	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս[2)]	Գների ինդեքսը շինարարությունում [3)]	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս [4)]	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս [5)]	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս [6)]
2006թ.						
Հունվար	102.5	97.8	100.3	99.1	99.1	101.4
Փետրվար	100.2	99.2	100.1	100.0	101.5	101.6
Մարտ	100.1	97.2	102.2	100.5	100.2	101.6
Ապրիլ	100.3	103.3	101.6	120.3	103.3	98.9
Մայիս	102.4	107.1	100.1	99.9	98.0	101.1
Հունիս	98.8	97.7	100.0	99.7	83.2	100.9
Հուլիս	99.3	100.0	100.1	100.0	83.9	103.5
Օգոստոս	99.1	99.7	100.5	100.1	83.2	104.3
Սեպտեմբեր	99.7	99.2	100.3	100.0	92.8	101.2
Հոկտեմբեր	100.2	100.7	99.8	99.6	101.8	99.6
Նոյեմբեր	101.0	99.2	101.9	99.6	103.4	97.9
Դեկտեմբեր	101.6	100.0	99.9	99.7	111.9	96.9
Դեկտեմբերը 2005թ. դեկտեմբերի նկատմամբ	105.2	100.6	107.1	118.2	103.8*)	106.4*)
2006թ. հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	102.9	100.9	106.9	115.0	111.9	108.9

**) 2006թ. դեկտեմբերի և 2005թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:*

1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում, 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

2) Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է Ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏՃՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնափոխադրումների դիտարկված սակագների հիման վրա:

5) Ըստ 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

6) Ըստ 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Արտարժութային շուկա: 2006թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 1.6% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.1% նվազումով: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սպառողական գների 5.2% հավելաճ, իսկ հաշվարկային փոխարժեքը նշված ժամանակահատվածում նվազել է 18.9%-ով (դրամն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար՝ 0.2% և 7.6% նվազում: 2006թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 364.64 դրամ՝ 2005թ. 449.36 դրամի փոխարեն:

Սպառողական գներ: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է 5.2% գնաճ՝ 2005թ. նույն ժամանակահատվածվածի համապատասխան ցուցանիշի 0.2% գնանկման դիմաց:

2006թ. հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.4%, նախորդ տարվա նույն ցուցանիշի 0.05% գնանկման դիմաց:

Պարենային ապրանքների գներ: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 7.3% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 37.9% գնաճ, ինչը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 28.4 տոկոսային կետով (9.5%):

2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է մրգի 29.5% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշի 17.4% նվազման դիմաց:

2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ տավարի մսի գնաճը կազմել է 3.3%, ինչով էլ, թերևս, պայմանավորվել է տավարի մսի գնի համեմատ վերոհիշյալ ապրանքատեսակների մեծ մասի գների 6.9-0.1 տոկոսային կետով նվազումը (բացառությամբ շաքարավազի, ձվի, խնձորի, սուրճի, կարտոֆիլի, թարմ «Սիգ» ձկան, որոնց գները նշված ժամանակահատվածում տավարի մսի գնի համեմատ աճել են 2.7-31.9 տոկոսային կետով):

Ոչ պարենային ապրանքների գներ: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.5% գնաճ, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 1.6 տոկոսային կետով (2.1%):

2006թ. հունվար-դեկտեմբերին ոչ պարենային ապրանքների գների ընդհանուր մակարդակի վրա իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել բենզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունները: Դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 10.6% գնանկում, իսկ դիզելային վառելիքի գինն աճել է 1.7%: 2006թ. դեկտեմբերին

2005թ. համեմատ հանրապետությունում արձանագրվել է բենզինի 3.6% գնանկում, իսկ դիզելային վառելիքի գծով՝ 5.5% գնաճ:

Ծառայությունների սակագներ: Ծառայությունների ոլորտում 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սակագների 5.3% հավելաճ, ինչը 3.4 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (1.9%):

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկություններ: Հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում 2006թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.0-2.4%, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.7%:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2006թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 1.7-0.2%-ով, ընդ որում, գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.5% գնանկում:

Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2006թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.1-2.5% հավելաճ, 4 քաղաքներում՝ 0.2-0.1% նվազում, իսկ Արտաշատ և Կապան քաղաքներում պահպանվել է ծառայությունների սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը հանրապետությունում կազմել է 0.6% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 4.0% գնանկում):

Բեռնափոխադրումների սակագներ: 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 18.2% հավելաճ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 5.1% նվազման դիմաց:

Արտաքին առևտրի (ներմուծման և արտահանման) գներ

Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում, ըստ եռամսյակների (առանց մարդասիրական օգնության)

	Ընդամենը, ըստ երկրների				*այդ թվում՝*							
					ըստ ԱՊՀ երկրների				ըստ ոչ ԱՊՀ երկրների			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	նախորդ եռամսյակի նկատմամբ, %											
2005[1]	103.9	98.3	96.2	110.4	97.6	97.1	97.9	100.0	105.9	98.7	95.7	113.4
2006[1]	107.2	99.9	101.1	95.5	104.4	99.5	117.5	96.3	108.0	100.0	96.3	95.2
	նախորդ տարվա նկատմամբ, %											
2005	103.9	102.2	98.3	108.5	97.6	94.8	92.8	92.8	105.9	104.5	100.0	113.5
2006	107.2	107.0	108.2	103.3	104.4	103.9	122.0	117.5	108.0	108.0	104.0	99.0

[1] *Առաջին եռամսյակի համար, որպես բազիսային ժամանակաշրջան, ընդունվել է նախորդ տարին:*

Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում, ըստ եռամսյակների (առանց մարդասիրական օգնության)

	Ընդամենը, ըստ երկրների				*այդ թվում՝*							
					ըստ ԱՊՀ երկրների				ըստ ոչ ԱՊՀ երկրների			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	նախորդ եռամսյակի նկատմամբ, %											
2005[1]	101.0	94.1	89.7	119.4	91.8	102.1	101.5	103.9	103.2	92.4	86.9	123.6
2006[1]	101.2	98.5	92.0	118.4	96.7	106.8	92.2	94.9	102.7	96.0	92.0	126.4
	նախորդ տարվա նկատմամբ, %											
2005	101.0	95.1	85.3	101.8	91.8	93.7	95.1	98.8	103.2	95.4	83.0	102.5
2006	101.2	99.8	91.8	108.7	96.7	103.3	95.3	90.4	102.7	98.6	90.7	114.7

Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

Զբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1201.3 հազ. մարդ, որոնց 92.6%-ը կամ 1112.4 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 7.4%-ը կամ 88.9 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսապես ակտիվ բնակչության կառուցվածքի փոփոխությունը, 2005-2006թթ.

	Տնտեսապես ակտիվ բնակչությունը		*այդ թվում՝ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ*			
			զբաղվածության մակարդակը, %		պաշտոնական գործազրկության մակարդակը, %	
	ընդամենը, հազ. մարդ	*նրանցից՝* կանայք	ընդամենը	*որից՝* կանանց[3]	ընդամենը	*որից՝* կանանց[2]
2005 թ.✧						
Հունվար-մարտ	1176.9	563.0	90.9	41.5	9.1	6.4
Հունվար-հունիս	1197.9	571.9	91.3	41.6	8.7	6.1
Հունվար-սեպտեմբեր	1201.4	572.7	91.6	41.8	8.4	5.9
Հունվար-դեկտեմբեր	1195.8	569.6	91.8	41.9	8.2	5.8
2006թ. (գնահատական)						
Հունվար-մարտ	1189.2	564,9	92.5	42.2	7.5	5.3
Հունվար-հունիս	1206.7	573,1	92.5	42.2	7.5	5.3
Հունվար-սեպտեմբեր	1208.4	574,0	92.6	42.2	7.4	5.3
Հունվար-դեկտեմբեր	1201.3	570,7	92.6	42.2	7.4	5.3

2006թ. դեկտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկներից կանայք կազմել են 71.7%, որոնց տեսակարար կշիռը 2006թ. նոյեմբերի նկատմամբ աճել է 0.4%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի նկատմամբ՝ աճել է 0.9%-ով:

---

[3] *Կանանց զբաղվածության և գործազրկության մակարդակները հաշվարկված են ընդամենը տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:*

Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 1722253.7 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝1650686.8 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2005թ. հունվար-դեկտեմբերի համեմատ, համապատասխանաբար, կազմել են 119.8% և 118.9%:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2006թ. հունվար- դեկտեմբերին 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել են 16.7%-ով:

2006թ. նոյեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը սահմանված նվազագույն աշխատավարձին գերազանցել է 4.5 անգամ՝ 2005թ. 4.2 անգամի համեմատ:

Բյուջետային կազմակերպություններում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի գնահատումը կատարվել է բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների տվյալների հիման վրա:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նախնական տվյալների, 2006թ.հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները կազմել են 439620.1 մլն. դրամ և 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել 17.9%-ով: 2006թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 454977.6 մլն. դրամի ծախսեր (ԾԻԳ-ի միջոցները ներառյալ՝ 479749.9 մլն. դրամ), իսկ ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 15357.5 մլն. դրամ (ԾԻԳ-ի միջոցները ներառյալ՝ 40129.8 մլն. դրամ):

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշներ[1]

(ընթացիկ գներով, մլն. դրամ)

	2005թ. հունվար-դեկտեմբեր	2006թ. դեկտեմբեր	2006թ. հունվար-դեկտեմբեր	2006թ.հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ,%
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	**372941.3**	**53993.8**	**439620.1**	**117.9**
այդ թվում՝ Ընդամենը եկամուտներ	363115.9	46204.2	427334.1	117.7
այդ թվում՝ Ա.Ընթացիկ եկամուտներ	350749.7	44685.5	411338.4	117.3

[1] *Ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:*

	2005թ. հունվար-դեկտեմբեր	2006թ. դեկտեմբեր	2006թ. հունվար-դեկտեմբեր	2006թ.հունվար-դեկտեմբերը 2005թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ,%
այդ թվում՝				
1.Հարկային եկամուտներ	304257.1	40040.1	359715.0	118.2
2.Պետական տուրք	17274.7	1476.3	18985.8	109.9
3.Ոչ հարկային եկամուտներ	29217.9	3169.1	32637.6	111.7
Բ.Կապիտալի գործառնություններից եկամուտներ	12366.3	1518.7	15995.7	129.3
Պաշտոնական տրանսֆերտներ	9825.4	7789.6	12286.0	125.0
Ծախսեր, ընդամենը	**395169.1**	**63190.6**	**454977.6**	**115.1**
Պակասուրդ (-)/հավելուրդ (+)	**-22227.8**	**-9196.8**	**-15357.5**	**-69.1**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, փողի բազան 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 282997 մլն.դրամ և նախորդ ամսվա նկատմամբ աճել 42228 մլն. դրամով կամ 17.5 %-ով:

Փողի բազայի կազմը[1]

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	2006թ.				
	մարտ[2]	հունիս[2]	սեպտեմբեր[2]	նոյեմբեր	դեկտեմբեր
Զուտ արտաքին ակտիվներ (ԶԱԱ), ընդամենը (առանց սեփականաշնորհման միջոցների)[3]	**213485**	**251646**	**274633**	**321935**	**387514**
Զուտ ներքին ակտիվներ, ընդամենը	-24394	-52531	-43541	-81166	-104516
այդ թվում՝					
Կառավարություն	-22459	-35026	-25389	-45826	-57716
Բանկեր	10620	12471	10624	8644	7876
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-29078	-23908	-34956	-41489	-38988
Զուտ այլ ակտիվներ	16523	-6067	6181	-2496	-15689
Փողի բազա, ընդամենը	**189091**	**199115**	**231092**	**240769**	**282997**

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փողի զանգվածը կազմել է 485743[4] մլն.դրամ և նախորդ ամսվա նկատմամբ աճել 28771 մլն. դրամով կամ 6.3 %-ով:

Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները

(%)

	2006թ.				
	մարտ	հունիս	սեպտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Առևտրային բանկերի գործառնությունների տոկոսադրույքներ					
վարկեր[5]	16.51	15.56	16.49	16.25	17.20
ավանդներ[5]	5.17	5.57	5.92	5.85	5.59
ՀՀ կենտրոնական բանկի ՌԵՊՈ գործառնությունների տոկոսադրույքներ	4.00	4.00	4.50	4.75	4.75

[1] *Ըստ ակտիվային և պասիվային բաղադրատարրերի: Ներդրումային արժեթղթերը հաշվարկված են շուկայական արժեքով:*

[2] *Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[3] *ԶԱԱ-ն հաշվարկված է հետևյալ ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար =450.19 դրամ,1 SDR =1.4293 ԱՄՆ դոլար 1 EUR =1.1825 ԱՄՆ դոլար, 1 GBP=1.7181 ԱՄՆ դոլար,1 RUR =0.0347 ԱՄՆ դոլար :*

[4] *Ներառյալ կուտակված տոկոսները և հաշիվները:*

[5] *Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավածավանդների համար (առանց միջբանկային շուկայի):*

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 121921 մլն. դրամ և նախորդ ամսվա նկատմամբ աճել 11375 մլն. դրամով կամ 10.3.%-ով, իսկ նախորդ տարվա նկատմամբ աճել 25648 մլն. դրամով կամ 26.6.%-ով:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Ապրանքների արտահանում և ներմուծում

Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը : Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից ստացված և հավաքագրված օպերատիվ տվյալների, ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2006թ. հունվար-դեկտեմբերին, ընթացիկ գներով, կազմել է 1314431.3 մլն. դրամ կամ 3198.3 մլն. ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), այդ թվում ապրանքների արտահանումը՝ 412207.2 մլն. դրամ (ՖՕԲ գնով) կամ 1004.0 մլն. դոլար և ներմուծումը՝ 902224.0 մլն. դրամ (ՍԻՖ գնով) կամ 2194.3 մլն. դոլար: Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 490016.8 մլն.դրամով (1190.4 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 468056.2 մլն. դրամով (1136.8 մլն. դոլարով): Ըստ նախնական տվյալների, 2006թ. հունվար-դեկտեմբերին արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 913.9 մլն. դոլար:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը[1]: 2006թ. հունվար-դեկտեմբերին արտահանման ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 3.1%-ով, իսկ ներմուծումը՝ 21.8%-ով:

Մարդասիրական օգնություն

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, 2006թ. հունվար-դեկտեմբերին մարդասիրական օգնության կարգով, ՀՀ են ներմուծվել 5778.8 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 21960.6 մլն. դրամ կամ 53.6 մլն. դոլար: Ստացված օգնության 40.2%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 23.6%-ը՝ սարքերը և ապարատները, 7.2%-ը՝ մանածագործական իրերը, 6.5%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները:

Զբոսաշրջություն

Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2006թ. հունվար-դեկտեմբերին

[1] *Ապրանքների դասակարգումն իրականացվել է ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) բաժինների:*

հանրապետություն են ժամանել 381136 զբոսաշրջիկներ, 2005թ. նույն ժամանակաշրջանի 318563 զբոսաշրջիկների դիմաց կամ հավելաճի տեմպը կազմել է 19.6% : Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել են 329347 զբոսաշրջիկներ, 2005թ. նույն ժամանակաշրջանի 268664 զբոսաշրջիկների դիմաց կամ հավելաճի տեմպը կազմել է 22.6%:

Արտարժութային փոխարժեքներ

2006թ. դեկտեմբերին 1 ԱՄՆ դոլարի, 1 ԵՎՐՈ-ի և 1 Ռուսական ռուբլու արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներն, ըստ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվության, կազմել են , համապատասխանաբար՝ 364.64, 481.75 և 13.87 դրամ:

ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը 2006թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

(1000 մարդ)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2005 թ. հունվարի 1-ի դրությամբ	3215.8	1665.2	1550.6
2006 թ. հունվարի 1-ի դրությամբ	3219.2✧	1665.1✧	1554.1✧
2007 թ. հունվարի 1-ի դրությամբ	3222.7	1666.9	1555.8

2.Կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 2003-2005թթ.[1]

(տարի)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2003թ.	72.9	75.8	69.9
2004թ.	73.4	76.4	70.3
2005թ.	73.5	76.5	70.3

[1] *Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, պետք է ապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:*

3. **Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

(1000 կենդանի ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2004թ. հունվար-դեկտեմբեր	**11.6**	**8.8**	**13.9**
2005թ. հունվար-դեկտեմբեր	**12.3**	**10.8✧**	**13.5✧**
2006թ. հունվար-դեկտեմբեր	**13.8**	**12.1**	**15.4**

4.**Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

(1000 կենդանի ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2004թ. հունվար-դեկտեմբեր	**13.0**	**10.4**	**15.2**
2005թ. հունվար-դեկտեմբեր	**13.7✧**	**12.2✧**	**15.0✧**
2006թ. հունվար-դեկտեմբեր	15.5	13.2	17.1

5. **Մայրական մահացության գործակիցը,** 100000 կենդանի ծնվածի հաշվով, 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 26.6 (10 դեպք)՝ 2005թ. հունվար-դեկտեմբերի 18.7 (7 դեպք) դիմաց:

7. **Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում** 2006/2007 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

*12. **ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով** 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 827394 դրամ կամ 1989 ԱՄՆ դոլար:*

14. **Գործազրկության (պաշտոնական) մակարդակը** 2006թ. դեկտեմբերին կազմել է 7.2 %: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2006թ. դեկտեմբերին կազմել է 10.8 %, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 3.8 %:

15. 2006թ. հունվար-դեկտեմբերին **տնտեսության մեջ զբաղված է եղել** ՀՀ բնակչության 34.5 %-ը, այդ թվում կանանց՝ 30.5%-ը, տղամարդկանց՝ 38.9 %-ը:

Ժողովրդագրական իրավիճակը

ՀՀ վարչատարածքային բաժանման համար հիմք է հանդիսացել 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը[5], ըստ որի ՀՀ տարածքը բաժանված է 11 մարզերի, ներառյալ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով (12 թաղային համայնքներով), 48 քաղաքային և 866 գյուղական համայնքների:

ՀՀ վարչատարածքային բաժանումը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

	Համայնքների թիվը			
	ընդամենը	քաղաքային	թաղային	գյուղական
Հայաստանի Հանրապետություն	**926**	**48**	**12**	**866**
ք. Երևան	12	-	12	-
Արագածոտն	114	3	-	111
Արարատ	97	4	-	93

[5] *Ներառյալ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ 14.12.2004թ. ՀՕ-41-Ն և 13.06.2006թ. ՀՕ-147-Ն ընդունած ՀՀ օրենքները:*

	Համայնքների թիվը			
	ընդամենը	քաղաքային	թաղային	գյուղական
Արմավիր	97	3	-	94
Գեղարքունիք	92	5	-	87
Լոռի	113	8	-	105
Կոտայք	67	7	-	60
Շիրակ	119	3	-	116
Սյունիք	109	7	-	102
Վայոց ձոր	44	3	-	41
Տավուշ	62	5	-	57

2007թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվառմամբ կազմել է 3222.7 հազ. մարդ, այդ թվում՝ քաղաքայինը՝ 2065.8 հազ. մարդ, գյուղականը՝ 1156.9 հազ. մարդ:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, հունվարի 1-ի դրությամբ

(1000 մարդ)

	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2006թ.✧	2007թ.	2006թ.✧	2007թ.	2006թ.✧	2007թ.
Հայաստանի Հանրապետություն	3219.2	3222.7	2062.6	2065.8	1156.6	1156.9
ք. Երևան	1103.8	1104.9	1103.8	1104.9	0	0
Արագածոտն	139.5	140.0	33.0	33.0	106.5	107.0
Արարատ	274.2	275.1	80.7	81.0	193.5	194.1
Արմավիր	279.2	280.1	99.2	99.6	180.0	180.5
Գեղարքունիք	239.4	239.6	79.7	79.6	159.7	160.0
Լոռի	283.4	282.7	166.7	166.1	116.7	116.6
Կոտայք	275.1	276.2	154.5	155.1	120.6	121.1
Շիրակ	281.4	281.3	171.4	170.9	110.0	110.4
Սյունիք	153.0	152.9	103.8	103.7	49.2	49.2
Վայոց ձոր	55.8	55.7	19.4	19.3	36.4	36.4
Տավուշ	134.4	134.2	50.4	52.6[6]	84.0	81.6

2007թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, 2006թ. տարեսկզբի համեմատությամբ աճել է 3.5 հազ. մարդով, իսկ 2005թ. հունվարի 1-ի համեմատությամբ՝ 6.9 հազ. մարդով, արձանագրելով տարեկան 0.1 % աճ: Ընդ որում, 2006թ. հավելաճի 77%-ը արձանագրվել է գյուղական բնակչության թվաքանակի ցուցանիշում:

2006թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճն ապահովվել է ի հաշիվ բնակչության բնական հավելաճի, որը թեև 2005թ. հունվար-դեկտեմբերի համեմատ նվազել է 6.3%-ով, սակայն, դրա հետ մեկտեղ, 10.1%-ով նվազել է միգրացիայի մնացորդի ցուցանիշը:

2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 37568 ծնված, 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ դրա բացարձակ ցուցանիշի հավելաճը կազմել է 0.2%, իսկ ծնելիության ընհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, պահպանվել է նույն մակարդակի վրա, կազմելով՝ 11.7 ‰ :

[6] *Վերոնշյալ ՀՀ օրենքով Այրում համայնքի կարգավիճակը փոփոխության է ենթարկվել և գյուղական համայնքից դարձել է քաղաքային:*

ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները

(մարդ)

	Հունվար-դեկտեմբեր			
	մարդ		1000 բնակչի հաշվով, պրոմիլ	
	2005թ.	2006թ.	2005թ.	2006թ.
Ծնվածներ *այդ թվում՝*	37499	37568	11.7	11.7
տղա	20116	19973	13.0	12.8
աղջիկ	17383	17595	10.4	10.6
Մահացածներ *այդ թվում՝*	26379	27149	8.2	8.4
տղամարդ	13752	14153	8.9	9.1
կին	12627	12996	7.6	7.8
Մահացածներից՝ մինչև 1 տարեկան հասակում	460	520	12.3[7]	13.8[1]
այդ թվում՝				
տղա	272	308	13.5	15.4
աղջիկ	188	212	10.8	12.1
Բնական հավելաճ	11120	10419	3.5	3.3
Ամուսնություններ	16624	16887	5.2	5.2
Ամուսնալուծություններ	2466	2796	0.8	0.9

2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է մեռելածնության 663 դեպք, որը 1.9 անգամ ավելի է 2005թ. հունվար-դեկտեմբերին արձանագրված մեռելածնության դեպքերի համեմատ:

2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է մահվան 27149 դեպք և 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ մահվան դեպքերի հավելաճը կազմել է 2.9%: Մահացության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 8.4‰՝ 2005թ. նույն ժամանակահատվածի 8.2 ‰-ի դիմաց:

2006թ. հունվար-դեկտեմբերին ծնվածների թվաքանակը 1.4 անգամ գերազանցել է մահացության դեպքերը:

Բնական հավելաճի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2006թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 3.3‰ և 2005թ. հունվար-դեկտեմբերի համեմատ նվազել է 0.2 պրոմիլային կետով:

2006թ. հունվար-դեկտեմբերին թեև հանրապետության և մարզերի կտրվածքով արձանագրվել է բնակչության բնական հավելաճ, սակայն Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Շամլուղ և Բերդ քաղաքներում, Թումանյանի, Ճամբարակի, Կապանի, Մեղրու և Տավուշի տարածաշրջանների գյուղական համայնքներում արձանագրվել են բնակչության բնական նվազման ցուցանիշներ (մահերը գերազանցել են ծնունդներին):

[7] *1000 կենդանի ծնվածի հաշվով :*

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2006թ. հունվար-դեկտեմբերին

(մարդ)

	Ծնված-ներ	Մահա-ցածներ	այդ թվում՝ 0-1 տարեկան մահացածներ	Բնական հավելաճ	Ամուսնու-թյուններ	Ամուսնալու-ծություններ
Հայաստանի Հանրապետություն	**37568**	**27149**	**520**	**10419**	**16887**	**2796**
ք. Երևան	12391	9220	129	3171	6026	1256
Արագածոտն	1795	1183	23	612	643	96
Արարատ	3216	2049	36	1167	1268	157
Արմավիր	3361	2188	47	1173	1604	143
Գեղարքունիք	3022	1894	53	1128	1442	115
Լոռի	3183	2764	54	419	1420	379
Կոտայք	3416	2059	45	1357	1515	210
Շիրակ	3299	2568	74	731	1312	179
Սյունիք	1628	1357	24	271	685	103
Վայոց ձոր	635	509	10	126	273	63
Տավուշ	1622	1358	25	264	699	95

(1000 բնակչի հաշվով)

	Ծնված-ներ	Մահա-ցածներ	այդ թվում՝ 0-1 տարեկան մահացածներ[1]	Բնական հավելաճ	Ամուսնու-թյուններ	Ամուսնալու-ծություններ
Հայաստանի Հանրապետություն	**11.7**	**8.4**	**13.8**	**3.3**	**5.2**	**0.9**
ք. Երևան	11.2	8.3	10.4	2.9	5.5	1.1
Արագածոտն	12.8	8.5	12.8	4.3	4.6	0.7
Արարատ	11.7	7.5	11.2	4.2	4.6	0.6
Արմավիր	12.0	7.8	14.0	4.2	5.7	0.5
Գեղարքունիք	12.6	7.9	17.5	4.7	6.0	0.5
Լոռի	11.2	9.8	17.0	1.4	5.0	1.3
Կոտայք	12.4	7.5	13.2	4.9	5.5	0.8
Շիրակ	11.7	9.1	22.4	2.6	4.7	0.6
Սյունիք	10.6	8.9	14.7	1.7	4.5	0.7
Վայոց ձոր	11.4	9.1	15.7	2.3	4.9	1.1
Տավուշ	12.1	10.1	15.4	2.0	5.2	0.7

2006թ. հունվար-դեկտեմբերին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ մահացության պատճառական կառուցվածքում արձանագրվել է նորագոյացություններից, շնչառական օրգանների և մարսողական օրգանների հիվանդություններից, դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացության դեպքերի տեսակարար կշիռների աճ:

Հայաստանի Հանրապետությունում 2002-2006թթ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից արձանագրված ինքնասպանությունները և ինքնասպանության փորձերը

(դեպքերի քանակը)

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
Ինքնասպանություններ	212	188	184	199	244
Ինքնասպանության փորձեր	221	189	201	200	221
Ընդամենը	**433**	**377**	**385**	**399**	**465**

2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է մինչև 1 տարեկան երեխաների մահացության բացարձակ թվաքանակի 13.0%-ով աճ, 2005թ. հունվար-դեկտեմբերի համեմատ, իսկ մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 13.8 ‰՝ 2005թ. նույն ժամանակաշրջանի 12.3 ‰-ի դիմաց:

[1] *1000 կենդանի ծնվածի հաշվով:*

2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է 0-4 տարեկան երեխաների մահվան 582 դեպք, իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացության կառուցվածքում մինչև 1 տարեկանների մահացությունը կազմել է 89.3%: Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (1000 կենդանի ծնվածի հաշվով) կազմել է 15.5 ‰, տղա երեխաների մոտ այն կազմել է 17.1 ‰, իսկ աղջիկ երեխաների մոտ՝ 13.2 ‰:

Հանրապետությունում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում, 2006թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել է մայրական մահացության 10 դեպք, որով պայմանավորված, մայրական մահացության գործակիցը կազմել է 26.6 (100000 կենդանածնի հաշվով):

2006թ. հունվար-դեկտեմբերին 1.6%-ով աճել են գրանցված ամուսնությունները, իսկ ամուսնության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, մնացել է նույն մակարդակի վրա՝ 5.2 ‰: 2006թ. ամուսնալուծության դեպքերն ավելացել են 13.4%-ով, իսկ ամուսնալուծության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, աճել է 0.1 պրոմիլային կետով և կազմել 0.9‰: Հանրապետությունում 2006թ. հունվար-դեկտեմբերին 1000 գրանցված ամուսնական զույգերի համեմատ արձանագրվել է ամուսնալուծության 166 դեպք՝ 2005թ. հունվար-դեկտեմբերի 148 -ի համեմատ:

Գրանցված ամուսնալուծությունները 1000 ամուսնությունների հաշվով, ըստ մարզերի

	ք.Երևան	Արագա-ծոտն	Արա-ռատ	Արմա-վիր	Գեղար-քունիք	Լոռի	Կո-տայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տա-վուշ
2005թ.	203	79	166	106	48	156	131	120	129	210	88
2006թ.	208	149	124	89	80	267	139	136	150	231	136

ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից տրամադրած տեղեկատվության մշակման արդյունքում (ըստ եկողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 19-ի և ըստ մեկնողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 20-ի) 2006թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.[1].

ՀՀ միգրացիոն իրավիճակի ընդհանուր բնութագիրը

	2005թ. հունվար-դեկտեմբեր		2006թ. հունվար-դեկտեմբեր	
	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով
Ընդամենը՝				
եկողներ	10441	3.2	9098	2.8
մեկնողներ	18135	5.6	16029	5.0
միգրացիայի մնացորդ (+ , -)	-7694	-2.4	-6931	-2.2

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2006թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ սահմանային անցման կետերով իրականացվող արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը

[1] *Ցուցանիշները ներառում են նաև ներքին տեղաշարժերը:*

կազմել է 1945.7 հազ.: Ուղևորափոխադրումների հաշվեկշիռը (ժամանումների և մեկնումների տարբերությունը) կազմել է 21.7 հազ.՝ 2005թ. նույն ժամանակաշրջանի 12.5 հազ.-ի դիմաց՝ արձանագրելով ուղևորափոխադրումների հաշվեկշռի դրական մնացորդի 73.6 %-ով աճ:

Առողջապահություն

Տարափոխիկ հիվանդություններ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ամփոփ տեղեկատվության, հանրապետությունում 2006թ. դեկտեմբերին և հունվար- դեկտեմբերին գրանցվել են հետևյալ տարափոխիկ հիվանդությունները.

Հայաստանի Հանրապետությունում արձանագրված տարափոխիկ հիվանդությունների բացարձակ և հարաբերական ցուցանիշները

Հիվանդությունների անվանումը	2006թ. դեկտեմբեր				2005թ. դեկտեմբեր			
	ընդամենը		որից՝ 0 -14 տարեկանների մոտ		ընդամենը		որից՝ 0 -14 տարեկանների մոտ	
	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով
Սալմոնելոզային ինֆեկցիաներ	13	0.4	12	1.8	24	0.7	22	3.1
Սուր աղիքային հիվանդություններ	246	7.6	155	22.8	312	9.7	184	25.9
այդ թվում՝ բակտերիալ դիզենտերիա	53	1.6	34	5.0	62	1.9	39	5.5
էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոքսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով	42	1.3	38	5.6	57	1.8	45	6.3
սուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշգրտված հարուցիչներով	151	4.7	83	12.2	193	6.0	100	14.1
Դիզենտերիայի մանրէակիր	1	0.0	1	0.1	-	-	-	-
Տուլարեմիա	-	-	-	-	1	0.0	1	0.1
Բրուցելյոզ առաջնակի ախտորոշված	7	0.2	1	0.1	10	0.3	2	0.3
Կապույտ հազ	1	0.0	1	0.1	3	0.1	3	0.4
Հարակապույտ հազ	1	0.0	1	0.1	3	0.1	3	0.4
Մենինգոկոկային ինֆեկցիա	3	0.1	2	0.3	4	0.1	3	0.4
ՁԻԱՀ	1	0.0	-	-	4	0.1	-	-
ՄԻԱՎ	3	0.1	-	-	7	0.2	-	-
Սուր թորշոմած պարալիչ	2	0.1	2	0.3	-	-	-	-
Կարմրուկ	3	0.1	1	0.1	20	0.6	5	0.7
Վիրուսային հեպատիտ	87	2.7	54	7.9	89	2.8	45	6.3
որից՝ հեպատիտ Ա	78	2.4	53	7.8	77	2.4	45	6.3
հեպատիտ Բ	3	0.1	1	0.1	6	0.2	-	-
Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ	13	0.4	4	0.6	10	0.3	5	0.7
Պարոտիտ համաճարակային	5	0.2	2	0.3	17	0.5	9	1.3
Վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ	12717	395.2	8977	1319.8	23599	734.3	13158	1854.5
Գրիպ	451	14.0	246	36.2	829	25.8	385	54.3
Շնչօրգանների տուբերկուլյոզ	114	3.5	4	0.6	85	2.6	4	0.6
Սիֆիլիս	3	0.1	-	-	10	0.3	-	-
Գոնոկոկային վարակ (հոնորեա)	14	0.4	-	-	14	0.4	-	-
Քոս	23	0.7	9	1.3	59	1.8	24	3.4
Ոջլոտություն (պեդիկուլյոզ)	328	10.2	314	46.2	264	8.2	252	35.5

Հայաստանի Հանրապետությունում արձանագրված տարափոխիկ հիվանդությունների բացարձակ և հարաբերական ցուցանիշները

Հիվանդությունների անվանումը	2006թ. հունվար-դեկտեմբեր				2005թ. հունվար-դեկտեմբեր			
	ընդամենը		որից՝ 0 -14 տարեկանների մոտ		ընդամենը		որից՝ 0 -14 տարեկանների մոտ	
	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 բնակչի հաշվով	արձանագրված դեպքերի քանակը	հարաբերական ցուցանիշը 100000 համապատասխան տարիքի բնակչի հաշվով
Ողովայնային տիֆ	1	0.0	1	0.5	1	0.0	-	-
Պարատիֆ A, B, C	2	0.1	2	0.9	2	0.1	1	0.1
Սալմոնելոզային ինֆեկցիաներ	282	8.8	184	85.9	293	9.1	199	28.0
Սուր աղիքային հիվանդություններ	5330	165.7	3585	1673.7	4743	147.6	3060	431.3
այդ թվում՝ բակտերիալ դիզենտերիա	1033	32.1	706	329.6	792	24.6	478	67.4
իերսինիոզ	11	0.3	4	1.9	1	0.0	1	0.1
էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոքսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով	1043	32.4	846	395.0	873	27.2	701	98.8
սուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշգրտված հարուցիչներով	3243	100.8	2029	947.2	3077	95.7	1880	265.0
Դիզենտերիայի մանրէակիր	20	0.6	7	3.3	48	1.5	29	4.1
Տուլարեմիա	14	0.4	4	1.9	6	0.2	5	0.7
Բրուցելյոզ առաջնակի ախտորոշված	174	5.4	20	9.3	151	4.7	18	2.5
Կապույտ հազ	2	0.1	2	0.9	6	0.2	6	0.8
Հարակապույտ հազ	10	0.3	9	4.2	35	1.1	32	4.5
Մենինգոկոկային ինֆեկցիա	12	0.4	7	3.3	18	0.6	15	2.1
Փայտացում	2	0.1	-	-	2	0.1	-	-
ՁԻԱՀ	45	1.4	-	-	41	1.3	3	0.4
ՄԻԱՎ	63	2.0	2	0.9	75	2.3	2	0.3
Սուր թորշոմած պարալիչ	8	0.2	8	3.7	10	0.3	9	1.3
Կարմրուկ	137	4.3	45	21.0	2281	71.0	928	130.8
Վիրուսային հեպատիտ	982	30.5	474	221.3	749	23.3	308	43.4
որից՝ հեպատիտ Ա	811	25.2	459	214.3	581	18.1	298	42.0
հեպատիտ Բ	92	2.9	13	6.1	86	2.7	8	1.1
Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ	73	2.3	35	16.3	65	2.0	28	3.9
Պարոտիտ համաճարակային	128	4.0	105	49.0	167	5.2	131	18.5
Լեպտոսպիրոզ	5	0.2	-	-	1	0.0	-	-
Վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ	87285	2712.8	57352	26775.0	118460	3685.7	70387	9920.6
Գրիպ	1985	61.7	883	412.2	7485	232.9	2820	397.5
Շնչօրգանների տուբերկուլյոզ	1216	37.8	41	19.1	1287	40.0	54	7.6
Սիֆիլիս	46	1.4	-	-	53	1.6	-	-
Գոնոկոկային վարակ (հոնորեա)	125	3.9	-	-	171	5.3	-	-
Քոս	361	11.2	150	70.0	291	9.1	139	19.6
Ոջլոտություն (պեդիկուլյոզ)	4877	151.8	4651	2171.3	8109	252.4	7569	1066.8

Մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) նկատմամբ շճաբանական հետազոտությունների արդյունքները: Ըստ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ՄԻԱՎ-ի հետազոտությունների արդյունքների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտված ՀՀ քաղաքացիների թվաքանակի բաշխվածությունն ըստ նրանց սեռատարիքային խմբերի և ըստ բնակության վայրի, 2006թ. հունվար-դեկտեմբեր

(մարդ)

Տարիքը	ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր		Ընդամենը	
	կին	տղա-մարդ	կին	տղա-մարդ	կին	տղա-մարդ	կին	տղա-մարդ
Մինչև 15	120	147	49	77	49	71	218	295
15-19	924	935	1480	249	1157	142	3561	1326
20-29	9353	2206	10186	1445	6133	452	25672	4103
30-39	3684	1615	2241	687	1167	275	7092	2577
40-49	2858	1562	1317	619	545	239	4720	2420
50-59	1725	1112	763	344	250	128	2738	1584
60 և բարձր	488	575	200	215	134	159	822	949
Ընդամենը	**19152**	**8152**	**16236**	**3636**	**9435**	**1466**	**44823**	**13254**

Իրավախախտումներ

Հանցագործություններ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ամփոփ տեղեկատվության, հանրապետությունում ըստ առանձին հանցատեսակների խմբերի, գրանցված հանցագործությունների դեպքերի մասին 2006թ. հունվար-դեկտեմբերին տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Մաքսային իրավախախտումներ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-դեկտեմբերին համակարգում մուտքագրվել է մաքսային օրենսդրության խախտման վերաբերյալ 42 նյութ: Մուտքագրված բոլոր նյութերն ուղարկվել են այլ մարմին՝ նախաքննության: Հետաքննվող գործերով առնչվել է 42 մարդ:

Հարկային իրավախախտումներ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-դեկտեմբերին համակարգում մուտքագրվել է 484 հետաքննության նյութ՝ կապված հարկային օրենսդրության խախտումների հետ և 2005թ. նյութերի մնացորդի հետ կազմել 551: Այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 43-ն ուղարկվել է այլ մարմին նախաքննության, 36-ի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, 46-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, 384-ը՝ վերադարձվել է ըստ ենթակայության: Նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 42: Մուտքագրված գործերով առնչվել է 736 մարդ, վերականգնվել է 373.9 մլն. դրամ:

Բնապահպանության իրավախախտումներ: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2006թ. հիշյալ նախարարության աշխատակազմի բնապահպանության պետական և տարածքային տեսչությունների կողմից ստուգվել է 2175 օբյեկտ: Հայտնաբերվել է բնապահպանության օրենսդրության խախտումների 1389 դեպք, որոնցից ոչ մեկը սահմանված ժամկետներում չի վերացվել:

Դատական ակտերի հարկադիր կատարումը 2006թ. հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում դատական ակտերի հիման վրա ստացվել է 53556 կատարողական վարույթ:

Նոտարական գործունեությունը 2006թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2006թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին համակարգում վավերացվել է, համապատասխանաբար՝ 101574 և 407491 գործ, գանձված պետական տուրքը կազմել է 168.6 և 613.3 մլն. դրամ: Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը կազմել է համապատասխանաբար՝ 1.7 և 1.5 հազ. դրամ:

Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2006թ. հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-դեկտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 167 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 116 միջպետական, 16 միջազգային և 35 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 448 պայման: Թողարկվել է 14 անուն տեղեկատվական նյութ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 10837 սերտիֆիկատ, որից 9250-ը՝ ներմուծվող, 115-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 1472-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 22 հայտ, որից 13-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 7 մարմին և 22 լաբորատորիա:

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2006թ. հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

Արտոնագրային գործունեությունը 2006 թվականին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության տեղեկատվության, 2006թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը:

Գյուտեր և օգտակար մոդելներ: 2006թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 193 գյուտի և 21 օգտակար մոդելի հայտ, որոնցից 213-ը՝ ազգային, 1-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ.-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 2568: 2006թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2005թ. համեմատ նվազել է 5.8%-ով: 2006թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել է գյուտերի 7 միջազգային հայտեր: 1994-2006թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 46 գյուտի հայտ:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2006թ. ներկայացվել է 2 հայտ:

179 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն: 188 հայտով կայացվել են որոշումներ 10 տարվա, 2 հայտով՝ 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին: 23 հայտերով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին: 2 հայտով որոշումներ են կայացվել արտոնագիր տալը մերժելու մասին, 11 հայտով՝ հայտի հետ կանչման մասին, գյուտի 2 հայտով կայացվել են կրկնական փորձաքննության որոշումներ:

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2006թ. ազգային ընթացակարգով ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1439 հայտ, (948-ը կամ 65.9%՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ: 2005թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 13.0%-ով: Օտարերկրյա իրավաբանական անձանցից ստացված հայտերի քանակը ՀՀ ազգային ընթացակարգով ավելացել է 36.8%-ով:

1400 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն: Հայտատուների կողմից հետ է կանչվել 50 հայտ, իսկ 76 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են ապրանքային և սպասարկման 1098 նշաններ և կայացվել են ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

2006թ. նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1657 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 450, իսկ վերջնական

մերժման մասին՝ 90 միջազգային գրանցումներով: 21 միջազգային գրանցումներով մերժվել է ապրանքային նշանների զիջումը: 2006թ. ներկայացվել է 28 արդյունաբերական նմուշի հայտ, այդ թվում՝ 14-ական՝ ազգային և օտարերկրյա հայտատուներից:

Ֆիրմային անվանումներ: 2006թ. գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3694 հայտ: Գրանցվել է 3525 անվանում, մերժվել է 169-ը: Ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 14 թույլտվություն:

Ոլորտին վերաբերող հրապարակումներ: 2006թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 4 համար: Տեղեկագրերը հրապարակվել են հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 213 գյուտի, 27 օգտակար մոդելի, 17 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1480 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների, 2349 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին: Գյուտի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2006թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 134 պայմանագիր, որից 104-ը՝ ապրանքային նշանների զիջման, 21-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 7-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2-ը՝ գյուտի արտոնագրի օգտագործման հասարակ լիցենզիա տալու մասին: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

Ֆինանսական ցուցանիշներ: 2006թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 462.2 մլն. դրամ, որի 40.7%-ը (188.0 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության գծով, 5.6%-ը (25.9 մլն. դրամ)՝ ֆիրմային անվանումների իրավական պահպանության, 0.9%-ը (4.3 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության գծով, 47.1%-ը (217.7 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 3.9%-ը (18.0 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 1.7%-ը (8.1 մլն. դրամ)՝ բողոքների քննարկման և 0.1%-ը (0.2 մլն. դրամ)՝ այլ գործողությունների գծով: 2005թ. համեմատ գանձված գումարների չափն ավելացել է 28.8%-ով:

Արխիվային գործունեությունը 2006 թվականին

ՀՀ ազգային արխիվի գործունեությունը: Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի ամփոփ տեղեկատվության, 2006թ. Հայաստանի ազգային արխիվի գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով:

ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի ֆիզիկական պահպանության ապահովում, 2006թ.

	Ընդամենը
Վերականգնում, *թերթ*	263978
Կազմապատում և կարում, *գործ*	35048
Արկղավորում, *գործ*	144582

ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունը կազմակերպություններում: 2006թ. ազգային արխիվին փաստաթղթեր են հանձնել 789 պետական և 2 ոչ պետական կազմակերպություններ:

2006թ. դեկտեմբեր ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, դեկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 2.5-4 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ 4-5^{0}C), ՀՀ Շիրակի մարզում՝ նորմային մոտ:

Դեկտեմբերի I տասնօրյակում միջին տասնօրյակային ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 1-3^{0}C-ով, II և III տասնօրյակներում՝ 2-4^{0}C-ով (Արարատյան դաշտավայրում՝ 7-8^{0}C-ով):

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում կազմել է +5 +8^{0}C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +3 +5^{0}C, Արարատյան դաշտավայրում և լեռնային շրջաններում՝ -1 +1^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանները տարածաշրջանների մեծ մասում դիտվել են դեկտեմբերի 18-20-ին (Արարատյան դաշտավայրում և ք.Մեղրիում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 1-3-ին), Սյունիքի հովիտներում, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում գրանցվել է +11 +15^{0}C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ +8 +10^{0}C (ք.Գորիսում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 16^{0}C), լեռնային շրջաններում՝ +4 +7^{0}C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում, ՀՀ Լոռու մարզում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում կազմել է -8 -13^{0}C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ -2 -7^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանները դիտվել են դեկտեմբերի 29-30-ին: Արարատյան դաշտավայրում, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում գրանցվել է -20 -25^{0}C (ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ)՝ -19^{0}C, Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ -26^{0}C), ՀՀ Տավուշի մարզում, Սյունիքի նախալեռներում և հովիտներում՝ -10 -15^{0}C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ -18^{0}C, ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -20^{0}C):

Ամսական տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր, որոշ տարածաշրջաններում՝ փոքր-ինչ բարձր: ՀՀ Սյունիքի մարզում այն կազմել է նորմայի 30-80%-ը, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 40-90%, ՀՀ Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում՝ 60-80% (Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 12%, Աշոցք գյուղում՝ 45%, ՀՀ Վայոց ձորի և Տավուշի մարզերում, Արարատյան դաշտավայրում՝ 80-135% (ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ 70%) :

Դեկտեմբերի 15-ին, 22-ին և 26-27-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է տեղումներ՝ ձյան տեսքով, մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը լեռնային շրջաններում և Արարատյան դաշտավայրում կազմել է 10-36 սմ, ՀՀ Լոռու մարզում, Սյունիքի նախալեռներում, ք.Դիլիջանում և ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 3-14 սմ, ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի առանձին տարածաշրջաններում ձյան ծածկույթը բացակայում էր:

Ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ) առանձին օրեր, ք.Երևանում՝ 16-24-ին, ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ)՝ 1-ին, ք.Վանաձորում, Ուրցաձոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ 17-ին, ք.Դիլիջանում՝ 2-ին, Պուշկինի լեռնացքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 15-ին, ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 15-16-ին, 23-ին, 25-ին, ք.Աշտարակում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 18-19-ին և 21-ին, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 30-ին դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 40-500 մ, 14-25-ին առանձին օրեր ք.Երևանում դիտվել է մառախուղ: Աշոցք գյուղում 16-ին, 22-23-ին, 31-ին, ք.Իջևանում՝ 17-19-ին, 26-ին, 29-30-ին, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), ք.Ստեփանավանում, Ամասիա գյուղում՝ 24-ին, ք.Տաշիրում՝ 24-25-ին, Պուշկինի լեռնացքում՝ 25-ին, 29-30-ին, ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 25-ին դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-20 մ/վրկ, պոռթկումները՝ 15-24 մ/վրկ: Ք.Արարատում 16-ին դիտվել է ուժեղ մառախուղ, 27-ին՝ ք.Արարատում և ք.Իջևանում՝ ուժեղ բուք:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 80-110%-ը: Սևանա լճի մակարդակը դեկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 3 սմ-ով և 2006թ. դեկտեմբերի 31-ին կազմել 1898.24 մ, որը 2005թ. նույն օրվա համեմատ բարձր է 18 սմ-ով:

2006թ. դեկտեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիտորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2006թ. դեկտեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիտորինգ: Դեկտեմբերին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 3258 փորձանմուշ: Որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- ***ք.Երևանում*** *վերցվել է օդի 1770 փորձանմուշ: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 1.9, ծծմբի երկօքսիդինը՝ 1.4, ազոտի երկօքսիդինը՝ 2.8 անգամ: Փոշու միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 3.6, ազոտի երկոքսիդինը՝ 3.5, ազոտի օքսիդինը՝ 1.8 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2, ծծմբի երկօքսիդինը՝ 1.3 անգամ:*
- ***ք.Գյումրիում*** *փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.6 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:*
- ***ք.Վանաձորում*** *վերցվել է օդի 936 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն*

գերազանցվել է 2.0, ազոտի երկօքսիդինը՝ 1.4 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 2.5 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:

- ***Ք.Հրազդանում*** *ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.9 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.8 անգամ:*
- ***Ք.Ալավերդում*** *վերցվել է օդի 480 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 10.8, ազոտի երկօքսիդինը՝ 1.4 անգամ: Ծծմբի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.9 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:*
- ***Ք.Արարատում*** *ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.4 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.4 անգամ:*

Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգ: Դեկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 13 գետերի և Երևանյան լճի դիտակետերից վերցվել է 26 փորձանմուշ, որոշվել է 21-26-ական ցուցանիշ:

- ***Դեբեդ գետի ավազան:*** *Փամբակ, Դեբեդ, Ձորագետ, Մարցիգետ և Ախթալա գետերից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-3.4-ական (Վանաձոր քաղաքից ներքև՝ 10.4 անգամ), նիտրիտ իոնինը՝ 1.3-2.5-ական, ԹԿՊ$_5$-ինը՝ 1.1-1.8-ական անգամ:Ախթալա գետի գետաբերանի հատվածքում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 5.2 անգամ, դիտվել է կախված մասնիկների 2131.6 մգ/դմ^3 պարունակություն: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:*
- ***Սևջուր գետի ավազան:*** *Սևջուր գետից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1-1.9, ամոնիում իոնինը՝ 1.8 (Վաղարշապատ քաղաքից վերև ընկած հատվածքում) և սուլֆատ իոնինը՝ 1.4-1.9 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:*
- ***Հրազդան գետի ավազան:*** *Փորձանմուշներ վերցվել են Հրազդան, Գետառ գետերից և Երևանյան լճից: Հրազդան գետի Դարբնիկ գյուղից ներքև և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում դիտվել է ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 31.8 և 18.4 անգամ: Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.2-6.3-ական, նիտրիտ իոնինը՝ 1.1-6.2-ական, ԹԿՊ$_5$-ինը՝ 1.5-1.8-ական անգամ: Հրազդան գետի Դարբնիկ գյուղից ներքև ընկած հատվածքում և Երևանյան լճում դիտվել է նաև կախված մասնիկների բարձր պարունակություն՝ համապատասխանաբար 509.0 և 455.4 մգ/դմ^3: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:*

Արտակարգ իրավիճակները 2006 թվականին

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության փրկարար ծառայության ամփոփ տեղեկատվության, 2006թ. հանրապետությունում գրանցվել է արտակարգ իրավիճակի 7138 դեպք (4566-ը՝ տեխնածին, 247-ը՝ տարերային և 2325-ը՝ սոցիալ-կենցաղային), տուժել է 5058 մարդ, նրանցից 481-ը զոհվել են, 4577-ը՝ վիրավորվել:

Գրանցված արտակարգ իրավիճակների դեպքերի 3.5%-ը բաժին է ընկել տարերային աղետներին, որոնց հետևանքով տուժվել է 4 մարդ (2-ական զոհ և վիրավոր):

Արտակարգ իրավիճակների դեպքերի 63.9%-ը բաժին է ընկել տեխնածին աղետներին, որոնց հետևանքով տուժել է 2566 մարդ (378 զոհ, 2188 վիրավոր):

Արտակարգ իրավիճակների դեպքերի 32.6%-ը բաժին է ընկել սոցիալ-կենցաղային աղետներին, որոնց հետևանքով տուժել է 2488 մարդ (101 զոհ, 2387 վիրավոր):

2006թ. ընթացքում արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել և ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 1721 ղեկավար և մասնագետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքները 2006թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2006թ. IV եռամսյակում երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 44.9 մլն. դրամ, որից ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ 16.1 մլն. դրամ, արտաբյուջետային պայմանագրերով՝ 28.8 մլն. դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալի բաշխվածությունն ըստ 2005-2006թթ. եռամսյակների

(մլն. դրամ)

		I		II		III		IV	
		2005	2006	2005	2006	2005	2006	2005	2006
Պետական բյուջեի միջոցների հաշվին	ընդամենը	-	-	7.4	6.2	22.6	1.7	12.2	16.1
	որից՝ ավելացած արժեքի հարկը	-	-	1.2	0.1	2.0	0.8	1.3	0.6
Արտաբյուջետային պայմանագրերով	ընդամենը	20.4	28.8	33.0	65.4	44.8	51.4	50.0	28.8
	որից՝ ավելացած արժեքի հարկը	2.4	2.6	3.5	6.3	6.2	4.6	4.0	2.0
Երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը	**ընդամենը**	**20.4**	**28.8**	**40.4**	**71.6**	**67.4**	**53.1**	**62.2**	**44.9**
	որից՝ ավելացած արժեքի հարկը	**2.4**	**2.6**	**4.7**	**6.4**	**8.2**	**5.4**	**5.3**	**2.6**

2006թ. հանրապետությունում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 198.4 մլն. դրամ, որի 12.1%-ը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից: 2006թ. ավարտվել է (վերջնական հորատվել է) 50 հորատանցք, որոնցից 35-ը՝ մինչև 25 մ, 1-ը՝ 25-100 մ և 14-ը՝ 101-200 մ խորության: Ավարտված հորատանցքերի գումարային խորությունը կազմել է 3172 մ, իսկ միջին խորությունը՝ 63.4 մ:

Կենդանաբանական այգու գործունեությունը 2006 թվականին

ՀՀ-ում գործող միակ պետական կենդանաբանական այգում 2006թ. տարեվերջի դրությամբ առկա է եղել 195 տեսակի կենդանի և թռչուն: Կենդանիների և թռչունների գլխաքանակը կազմել է 2328:

Անշարժ գույքի օտարումը 2006թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2006թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների (առանձնատների), այգետնակների (ամառանոցների), ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների, հողերի օտարման գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցումների քանակները ստացել են հետևյալ պատկերը.

Բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

(միավոր)

	Օտարումների քանակը, ընդամենը		այդ թվում՝					
			առուվաճառք		նվիրատվություն		փոխանակում	
	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր
ք.Երևան	3551	12607	2985	10446	557	2095	9	66
Արագածոտն	56	188	51	175	5	13	-	-
Արարատ	123	532	115	489	8	42	-	1
Արմավիր	208	671	186	603	18	61	4	7
Գեղարքունիք	107	372	99	330	8	41	-	1
Լոռի	347	1367	305	1150	42	207	-	10
Կոտայք	498	1649	448	1514	50	126	-	9
Շիրակ	253	986	173	671	76	306	4	9
Սյունիք	127	513	99	388	28	115	-	10
Վայոց ձոր	36	120	32	104	4	14	-	2
Տավուշ	77	256	64	213	13	41	-	2
Ընդամենը ՀՀ	5383	19261	4557	16083	809	3061	17	117

Բնակելի տների (առանձնատների) նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

(միավոր)

	Օտարումների քանակը, ընդամենը		այդ թվում՝					
			առուվաճառք		նվիրատվություն		փոխանակում	
	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր
ք.Երևան	408	1649	331	1264	75	357	2	28
Արագածոտն	118	438	96	353	22	82	-	3
Արարատ	236	886	202	738	33	142	1	6
Արմավիր	278	866	231	720	47	144	-	2
Գեղարքունիք	92	349	73	286	17	60	2	3
Լոռի	179	768	149	533	30	234	-	1
Կոտայք	238	770	199	625	39	141	-	4
Շիրակ	162	561	138	480	24	80	-	1
Սյունիք	59	213	49	159	10	51	-	3
Վայոց ձոր	37	98	31	87	6	11	-	-
Տավուշ	66	294	50	229	16	60	-	5
Ընդամենը ՀՀ	1873	6892	1549	5474	319	1362	5	56

Հողերի (այդ թվում գյուղատնտեսական նշանակության) նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

(միավոր)

	Օտարումների քանակը, ընդամենը		այդ թվում՝					
			առուվաճառք		նվիրատվություն		փոխանակում	
	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր
ք.Երևան	416	1987	393	1886	18	74	5	27
Արագածոտն	500	1904	478	1775	22	112	-	17
Արարատ	1194	3438	1161	3307	29	113	4	18
Արմավիր	926	3155	900	3063	26	78	-	14
Գեղարքունիք	203	772	176	631	27	141	-	-
Լոռի	372	863	360	794	8	65	4	4
Կոտայք	1596	4739	1526	4534	50	154	20	51
Շիրակ	340	1006	301	891	39	111	-	4
Սյունիք	147	460	140	416	7	40	-	4
Վայոց ձոր	195	523	183	508	12	15	-	-
Տավուշ	143	613	131	579	10	30	2	4
Ընդամենը ՀՀ	6032	19460	5749	18384	248	933	35	143

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

(միավոր)

	Օտարումների քանակը, ընդամենը		այդ թվում՝					
			առուվաճառք		նվիրատվություն		փոխանակում	
	IV եռամս-յակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամս-յակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամս-յակ	հունվար-դեկտեմբեր	IV եռամս-յակ	հունվար-դեկտեմբեր
ք.Երևան	5204	19203	4447	16277	732	2775	25	151
Արագածոտն	711	2672	660	2440	51	212	-	20
Արարատ	1590	5054	1513	4725	72	304	5	25
Արմավիր	1467	4882	1371	4563	92	296	4	23
Գեղարքունիք	566	1804	510	1550	54	249	2	5
Լոռի	969	3293	881	2736	84	536	4	21
Կոտայք	2547	7979	2358	7400	169	508	20	71
Շիրակ	821	2805	673	2275	144	516	4	14
Սյունիք	403	1447	353	1197	50	233	-	17
Վայոց ձոր	293	851	270	793	23	55	-	3
Տավուշ	323	1294	280	1137	41	146	2	11
Ընդամենը ՀՀ	**14894**	**51284**	**13316**	**45093**	**1512**	**5830**	**66**	**361**